# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 95-Ա

<<30 >> նոյեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

## ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԱՆ ԷԴՎԱՐԴԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Ընդունել քաղաքացի Ռոման Էդվարդի Պողոսյանի կողմից /հետագայում Նվիրատու/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքին կատարված <<MITSUBISHI VIN FE658C530307>> մակնիշի ավտովերելակի նվիրատվությունը, այն համարել համայնքի սեփականություն և ընդգրկել համայնքի սեփականության գույքի ցանկում, որի արժեքը, ըստ նվիրատուի հայտարարության կազմում է 13 /տասներք միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով սահմանված կարգով Նվիրատուի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

բ) <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն սույն որոշման 1-ին կետով նախատեսված նվիրատվության մասին տեղեկատվությունը հրապարակել համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ - 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Է. ՌՈՌՈՒՏՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | ______ | ______ | ______ |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | ______ | ______ | ______ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<30>> նոյեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ